ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԶՈՒԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/9

ք. Սպիտակ «12» մայիսի 2021թ.

Սպիտակ համայքը, ի դեմս համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հերմինե Բրուտյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված զբոսայգու հարևանությամբ գտնվող զուգարանի վերակառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 4 ամիս:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75% տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող

աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2 186 892 (երկու միլիոն մեկ հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, որից 364 482 (երեք հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր ութսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, որոնց են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն

ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սպիտակ համայնք	«ՀամբարյանՇին» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Վանաձոր, Տավրոս 4փ. 2նրբ. տ41
ՀՎՀՀ՝ 06801433	ՀՎՀՀ՝ 0690732
	Հ/Հ՝ 16600182886100
	«Էկոնոմբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆին նախ գործառն վարչ	Տնօրեն՝ Հ. Բոլուտյան
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 12 >>մայիսի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/9 ծածկագրով պայմանագրի

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ- ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԶՈՒԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Հիմնա-վորում	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քա-նակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհա-նուր արժեքը հազ.դր.	
1	2	3	4	5	16	18	
		Հատակներ / սանհանգույց/					
1	23-160	Բետոնե հատակների քանդում	$մ^3$	0,6	0,595	0,357	
2	23-169	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100 $մ^2$	0,1832	0,595	0,109004	
3	23-151	Գոյ. ունեցող միջնորմների քանդում 200մմ	100 $մ^2$	0,0165	0,595	0,009818	
4	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	2,4	3,57	8,568	
5	Գ310-5	Տեղափոխում 5կմ	տն	2,4	2,38	5,712	
6	11-11.	Բետոնե նախաշերտի կառուցում 100 մմ	$մ^3$	1,480	41,65	61,642	
7	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 20մմ հաստ.	100 $մ^2$	0,1480	2,618	0,387464	
8	13-221	Ջրամեկուսիչ շերտի իրականացում CR-60	$մ^2$	14,80	1,19	17,612	
9	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 $մ^2$	0,148	2,975	0,4403	
10	11-135	Կերամիկական սալիկներից հատակների կառուցում սոսինձ-4 մմ	100 $մ^2$	0,148	7,14	1,05672	
		տոկոսը ամբողջի համեմատ			95,89431	5,26195	%
		Հատակներ / նախամուտք/					
1	11-11.	Բետոնե նախաշերտի կառուցում 100 մմ	$մ^3$	0,380	47,6	18,088	
2	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 $մ^2$	0,038	2,975	0,11305	
		տոկոսը ամբողջի համեմատ			18,20105	0,998735	%
		Սալվածք					
1	11-2.	Բնահողի տուփանում խճով 15-20 մմ	100$մ^2$	0,29	1,785	0,52122	
2	11-11.	Բետոնե սալվածք 70 մմ հաստությամբ	$մ^3$	2,044	53,55	109,4562	
3	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 $մ^2$	0,292	2,975	0,8687	
		տոկոսը ամբողջի համեմատ			110,8461	6,082392	%
		Միջնորմներ					
1	8-140	Միջնորմների կառուցում 10 սմ հաստ.պեմզաբլոկից	$մ^3$	0,74	40	29,6	
2	Շուկա	Ամրան Ա-240С 8մմ	տն	0,0124	650	8,0665	
3	11-11.	պեմզաբլոկի անցքերի լիցք թեթև բետոն Բ - 7.5	$մ^3$	0,17	40	6,8	
4	6-170	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ-15 բետոնից	$մ^3$	0,052	50	2,6	
5	Շուկա	Ամրան Ա-240С 6 մմ	տն	0,00172	500	0,86	
6	Շուկա	Ամրան Ա-500С 12 մմ	տն	0,0023	500	1,16	
		տոկոսը ամբողջի համեմատ			49,0865	2,693494	%
		Տանիք					
1	12-288-1	Ջերմամեկուսիչ շերտ խարամից150մմ	$մ^3$	3,51	15	52,65	
2	12-299	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 20մմ հաստ.	100 $մ^2$	0,2340	1	0,234	
3	13-225	Գոլորշամեկուսացում ռուբերոիդով	$մ^2$	23,4000	0,3	7,02	
4	10-70.	Ծպեղնատոտի տեղադրում (մարթակ,կանգն,մաուերլատ,թեքան)	$մ^3$	0,88	100	88	
5	9-24.	Պրոֆիլավոր ցինկապատ թիթեղի տեղադրում / 0,5 մմ հաստությամբ /ԿՊ - 21	100 $մ^2$	0,276	5	1,38	
6	Շուկա	Չորսու /կավարամած 60*50/	$մ^3$	0,21	180	37,8	
7	10-22	Ցվիքի երեսապատում տախտակից - 20 մմ	$մ^2$	3,0	5	15	
8	Շուկա	Ցվիքի ամրացնող տախտակ	$մ^3$	0,03	120	3,6	
9	10-201	Փայտե կարկասի մշակում հակահրդեհային լուծույթով	$մ^3$	0,88	20	17,6	
10	10-203	Կավարամածի մշակում հակահրդեհային լուծույթով	100 $մ^2$	0,276	5	1,38	

11	6-106	Միաձույլ ե/բ միջուկի պատրաստում Բ-20 բետոնից	մ³	0,096	30	2,88	
12	Շուկա	Ամրան Ա-1-8մմ	տն	0,0054	500	2,7	
13	Շուկա	Ամրան Ա-500 c -12 մմ	տն	0,0088	500	4,4	
14	6-168	Ե/բ միաձույլ գոտու կառուցում Բ - 20 բետոնից	մ³	0,560	48	26,88	
15	Շուկա	Ամրան Ա-1 8 մմ	տն	0,0291	520	15,132	
16	Շուկա	Ամրան A 500C-12մմ	տն	0,05	520	26	
17	8-163	Ճակտոնի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ³	2,0	50	100	
18	8-59	Ճակտոնի շարվածքի ամրանավորում	տն	0,0160	500	8	
		տոկոսը ամբողջի համեմատ			410,656	22,53368	%
		Բացվածքներ					
1	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ (օտար.պրոֆիլ.սպիտակ)60 մմ հաստ.4+4 ապակեփաթեթ	մ²	0,96	20	19,2	
2	Շուկա	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում 6 սմ (օտար պրոֆիլ, սպիտակ գույն)	մ²	6,98	20	139,6	
		տոկոսը ամբողջի համեմատ			158,8	8,713736	%
		Հարդարման աշխատանքներ					
1	11-223	Պատերի ց/ավազային սավաղի քանդում	100 մ²	0,996	10	9,96	
2	23-169	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100 մ²	0,234	10	2,34	
3	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնա	տն	6,0	10	60	
4	Գ310-5	Տեղափոխում 5կմ	տն	6,0	10	60	
5	15-256	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ²	0,58	10	5,8	
6	15-256	Շեպերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ²	0,0366	10	0,366	
7	15-568	Շեպերի յուղաներկում	100մ²	0,0366	10	0,366	
8	15-82	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով - սոսինձ-4մմ հաստ	100մ²	0,580	40	23,2	
9	4-85	Կախովի առաստաղի իրականացում մետաղ կարկասի վրա երկշերտ պլաստիկով	մ²	14,8	33	488,4	
10	15-298	Արտաքին պատերի սվաղում ց/ա շաղախով ցանցի վրա	100մ²	0,56	40	22,24	
11	15-256	Ճակտոնի սվաղում ց/ավազային շաղախով	100մ²	0,12	40	4,8	
12	ինֆ տեղ	Պլաստմասե անկյունակների տեղադրում	100գծմ	0,20	20	4	
13	ինֆ տեղ	Անկյունակների տեղադրում /սվաղի/	100գծմ	0,44	20	8,8	
		տոկոսը ամբողջի համեմատ			690,272	37,87688	%
		Զրագծի ներքին տեղամաս					
1	1-962	Խրամուղու քանդում ձեռքով 4 -րդ կարգի գրունտներում	100մ³	0,05	5	0,25	
2	969	Խրամուղու հետկիցք ձեռքով 3 -րդ կարգի գրունտներում	100մ³	0,05	2	0,1	
3	16-260	Պոլիպրոպիլենային խողով..d=20 մմPN10	մ	10,0	1	10	
4	16-261	Պոլիպրոպիլենային խողով..d=25 մմPN10	մ	14,0	1	14	
5	16-134	Գնդիկավոր փականների տեղադրում d=25 մմ	հատ	1,0	2	2	
6	16-134	Լվացարանի ծորակ d=15մմ	հատ	2,0	6	12	
7	ե16-130	Զուգարանային ծորակի տեղադրում d=15մմ	հատ	2,0	4	8	
8	Շուկա	կցամաս պտուտակով 25	հատ	1,0	1	1	
9	Շուկա	Եռաբաշխիչ 25*20*25	հատ	2,0	0,357	0,714	
10	Շուկա	Եռաբաշխիչ 25*25*25	հատ	2,0	0,357	0,714	
11	Շուկա	Եռաբաշխիչ 20*20*20	հատ	3,0	0,357	1,071	
12	Շուկա	Արտուղղում d=25մմ	հատ	3,0	2	6	
13	Շուկա	Արտուղղում d=20մմ	հատ	3,0	2	6	
14	Շուկա	Արտուղղում d=20մմ ամրակով	հատ	8,0	1	8	
15	23-113	Անցքերի բացում պատերում	100հտ	0,02	1	0,02	
16	16-40	Պողպատե պաշտպանիչ պատյան d =50մմ	մ	0,5	0,595	0,2975	
17	Շուկա	Չժանգոտվող ճկախողովակ 0,5 մ երկ.d=15մմ	հատ	8,0	0,5	4	
18	Շուկա	Խողովակների խամուտ	հատ	40,0	0,3	12	
19	15-614	Խողովակների յուղաներկում /2 անգամ//պաշտպանիչ պատյան/	100 մ²	0,0006	17,85	0,01071	

20	46-71	Անցքերի ցեմենտացում	մ³	0,01	41,65	0,4165	
		տոկոսը ամբողջի համեմատ			86,59371	4,751604	%
		Կոյուղագծի ներքին տեղամաս					
1	1-962	Խրամուղու քանդում ձեռքով 4 -րդ կարգի գրունտներում	100մ³	0,03	5	0,15	
2	969	Խրամուղու հետկիցք ձեռքով 3 -րդ կարգի գրունտներում	100մ³	0,03	2	0,06	
3	16-34	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադ. d=110*3,2մմ	մ	12,0	3	36	
4	16-33	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադ. d=50*2,2մմ	մ	7,0	1	7	
5	17-22	Լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	2,0	10	20	
6	17-62	Զուքարակոնքի տեղադրում բաքիկով	կ-տ	2,0	10	20	
7	Շուկա	Պոլիվ ստուգիչ.մաքրիչ d=50մմ/արժեք/	հատ	1,0	1	1	
8	Շուկա	Պոլիվ ստուգիչ.մաքրիչ d=100մմ	հատ	1,0	1	1	
9	Շուկա	Եռաբաշխիչ 110*110*110	հատ	4,0	0,5	2	
10	Շուկա	Եռաբաշխիչ 110*50*110	հատ	1,0	0,5	0,5	
11	Շուկա	Եռաբաշխիչ 50*50*50	հատ	1,0	0,5	0,5	
12	Շուկա	Ճկախողովակ զուքարակոնքի d=100 մմ	հատ	2,0	1	2	
13	23-117	Անցքերի բացում (միջհարկային ծածկ)	100հտ	0,01	5	0,05	
14	23-113	Անցքերի բացում պատերում	100հտ	0,02	5	0,1	
15	Շուկա	Արտուղղում 90 Ե d=110մմ	հատ	6,0	1	6	
16	Շուկա	Արտուղղում 90 Ե d=50մմ/արժեք/	հատ	2,0	1	2	
17	Շուկա	Ճկախողովակ սիֆոնով d=50 մմ	հատ	2,0	1	2	
18	Շուկա	Ռետինե միջադիր d=50 մմ	հատ	4,0	0,1	0,4	
19	Շուկա	Պլաստմասե շրջակապ	հատ	40,0	0,5	20	
20	22-68	Պողպատե պատյանի տեղադրում d133մմ	մ	0,5	5	2,5	
21	20-111	Խողովակների կառուցում ցինկապատ թիթեղից d=150մմ 0.7 մմ հաստ.	մ²	0,5	5	2,5	
22	20-524	Զոնտի կառուցում ցինկապատ թիթեղից	մ²	0,20	5	1	
23	20-111	Ցինկապատ անցում d=150 - 100մմ	մ²	0,2	1	0,2	
24	46-71	Անցքերի ցեմենտացում	մ³	0,01	5	0,05	
25	15-614	Պաշտպանիչ պատյանի յուղաներկում 2 անգամ	100մ²	0,002	0,5	0,001	
					127,011	6,969398	%
		Ներքին էլեկտրալուսավորություն					
1	Սկց - 84 1-173	Արտաքին տեղադրման մետաղական արկղ 2 տեղ բանալիով 3SD6HPK	հատ	1	3,566	3,566	
2	8-525-1	Երկստեղ միաբևեռ ավտոմատ անջատիչ 4 Ա	հատ	1,0	4,76	4,76	
3	8-593-1	Արտաստիմանյան տիպի առաստաղի կետային ներկառուցվող լուսադիոդային լուսատու 9 վտ	Լրա-	8,0	5,95	47,6	
4	8-603-1	Հակավանդալային պատի լուսատու 12 վտ լուսադիոդային լամպով	Լրա-	2,0	5,95	11,9	
5	8-591-2	էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	6,0	1,19	7,14	
6	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ մեկուսաց. 2*1.5մմԱ	100 մ	0,35	0,238	0,0833	
		տոկոսը ամբողջի համեմատ			75,0493	4,118135	%
		Ընդամենը			1822,410		
		ԱԱՀ 20%			364,482		
		Ընդամենը			2186,892		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433

ՀՀ ֆին նախ գործառն վարչ
Համայնքի ղեկավար՝ Գ. Պահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Կապալառու
<<Համբարյանշին>> ՍՊԸ
ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ՝16600182886100
ՀՎՀՀ՝ 06960732
Տնօրեն՝
Հ. Բրուտյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 12 » մայիսի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/9 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀԱՐԵԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԶՈՒԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Սպիտակ համայնքի զբոսայգու հարևանությամբ գտնվող զուգարանի վերակառուցման աշխատանքներ	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	4 ամիս
ԸՆԴԱՄԵՆԸ		պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	4 ամիս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433

ՀՀ ֆին նախ գործառն վարչ
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապալառու
«Համբարյանշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տավրոս 4 Փ., 2 նրբ., Տ 41
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝16600182886100
ՀՎՀՀ՝ 06960732
Տնօրեն՝
Հ. Բրուտյան

(ստորագրություն)
Կ.Տ.